ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
**ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«3» դեկտեմբերի 2018 թվականի N26

## «ՄՈՒՍԱԼԵՌԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, 159-րդ հոդվածի առաջին կետով, և հիմք ընդունելով «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովհաննես Մկրտչյանի դիմումը՝ կարգադրում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Մուսալեռի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հովհաննես Մորիսի Մկրտչյանին դեկտեմբերի 7-ից հատկացնել 2018 թվականի հերթական արձակուրդը՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հովհաննես Մկրտչյանի աշխատանքային պարտականությունները դնել ընտանեկան բժիշկ Մարիամ Սահակյանի վրա:
3. Հովհաննես Մկրտչյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հունվարի 14-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 3
գ. Մուսալեռ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
04702116

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
# ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» դեկտեմբերի 2018 թվականի N 27

ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՖԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Արամայիս Սաֆարյանի 13.11.2018թ.դիմումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ղեկավարի տեղակալ Արամայիս Սաֆարյանի և Մուսալեռ համայնքի ղեկավարի միջև 2018 թվականի հուլիսի 12-ին անորոշ ժամկետով կնքած թիվ 1 աշխատանքային պայմանագիրը 2018 թվականի դեկտեմբեր 13-ից համարել լուծված:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Լուսինե Ալեքսանյան) սահմանված կարգով իրականացնել վերջնահաշվարկ:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 13
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

### ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«10» դեկտեմբերի 2018 թվականի N 28

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանում և «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում գույքագրում կատարելու նպատակով՝ կարգադրում եմ.

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի և մանկապարտեզի գույքագրման աշխատանքները իրականացնել դեկտեմբերի 10-ից մինչև դեկտեմբերի 17-ը:
3. Հանձնաժողովին /Գոհար Սայադյան/ գույքագրման արդյունքները ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 10
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի
N 28 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ՝

Գոհար Սայադյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի անդամներ՝

Լուսինե Ալեքսանյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Սոֆիկ Առաքելյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ

Խաթուն Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«17» դեկտեմբերի 2018 թվականի N 29

## ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հաշվի առնելով համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանի կողմից ծառայողական պարտականությունների որակյալ կատարումը՝ կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Սայադյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ տալ միանվագ դրամական պարգևատրում՝ 140 000 դրամ:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 17
գ. Մուսալեռ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«21» դեկտեմբերի 2018 թվականի N 30

## «ՄՈՎՍԵՍ ՏԵՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՐԿԱԴԻՐ ՊԱՐԱՊՈՒՐԴՈՒՄ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 17.12.2018թ. N112 որոշումը՝ կարգադրում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի աշխատակազմին 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2019 թվականի փետրվարի 1-ը ներառյալ համարել հարկադիր պարապուրդում:
2. ՀՈԱԿ-ի տնօրեն Խաթուն Հակոբյանին կատարել սույն կարգադրությունից բխող իրավական գործառույթներ՝ աշխատակազմի անդամների աշխատավարձի բաշխումը կատարելով համապատասխան օրենքի շրջանակներում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 21
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» դեկտեմբերի 2018 թվականի N 58

### ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն, 2018 թվականի հունվարի 30-ի N4 որոշումը՝ որոշում եմ.

1. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքում ծնված երեխաների ծնողներին՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Դրամական օգնություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի բնակչի մահվան դեպքում ընտանիքի անդամին՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 17
գ. Մուսալեռ

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
N58 ՈՐՈՇՄԱՆ

# ՑՈՒՑԱԿ

## Ծնված երեխաների ծնողներին

| Հ/Հ | Երեխայի ազգանուն, անուն, հայրանունը | Երեխայի ծննդյան օրը | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Սարգսյան Նարեկ Ալեքսան | 20.09.2018 | Սարգսյան Ալեքսան Արտուշի | 30 000 |
| 2 | Բախտավորյան Նատալի Միեր | 05.10.2018 | Բախտավորյան Միեր Սամվելի | 30 000 |
| 3 | Հակոբյան Մանե Մուրադ | 15.10.2018 | Հակոբյան Մուրադ Սասունիկի | 30 000 |
| 4 | Վարդանյան Վարդգես Դավիթ | 24.10.2018 | Վարդանյան Դավիթ Վարդգեսի | 30 000 |
| 5 | Խեչումյան Դանիել Տիգրան | 15.11.2018 | Խեչումյան Տիգրան Գագիկի | 30 000 |
| 6 | Ասատրյան Էլեն Նարեկ | 22.11.2018 | Ասատրյան Նարեկ Ռուբենի | 30 000 |
| 7 | Թամազյան Մարկ Վիգեն | 29.11.2018 | Թամազյան Վիգեն Լյուդվիկի | 30 000 |
| 8 | Թովմասյան Եվա Գևորգ | 06.12.2018 | Թովմասյան Գևորգ Մարտիրոսի | 30 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի
N 58 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հարազատին կորցրած ընտանիքին դրամական օգնություն տալու

| Հ/Հ | Մահացածի ազգանուն, անուն, հայրանունը | Մահվան ամսաթիվ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1 | Սլոյան Արֆուտ Չոլոյի | 10.10.2018թ. | Սլոյան Մրազ Արֆուտի | 50 000 |
| 2 | Բիսլամյան Միքայել Առաքելի | 24.11.2018թ. | Բիսլամյան Մանուկ Միքայելի | 50 000 |
| 3 | Ջեթիյան Պետրոս Պողոսի | 04.12.2018թ. | Ջեթիյան Վարդան Պետրոսի | 50 000 |
| 4 | Հաջաթյան Սարգիս Մինասի | 06.12.2018թ. | Սուվարյան Վարդան Մինասի | 50 000 |
| 5 | Ադամյան Վարդուհի Մարտիկի | 07.12.2018թ. | Ադամյան Սամվել Սարգսի | 50 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» դեկտեմբերի 2018 թվականի N57

## ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 72-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝

   1) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4841 /բնական աղետներից առաջացած վնասվածքների կամ վնասների վերականգնում/ պակասեցնել 1200.0 հազար դրամ:

   1) Վարչական բյուջեի 10 բաժին 7 խումբ 1 դաս հոդված 4729 /այլ նպաստներ բյուջեից/ ավելացնել 1200.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 14
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
## ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«14» դեկտեմբերի 2018 թվականի N 56

### ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն որոշումը ՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սաների համար ամանորյա նվերներ ձեռք բերելու նպատակով տրամադրել 56 250 /հիսունվեց հազար երկու հարյուր հիսուն/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 14
գ. Մուսալեռ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
## ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» դեկտեմբերի 2018 թվականի N 55

### ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 72-Ն որոշումը ՝ որոշում եմ.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շինության միջանցքի ջերմամեկուսացումն ապահովելու նպատակով պենոպլաստ ձեռք բերելու համար տրամադրել 19 200 /տասնինը հազար երկու հարյուր/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 14
գ. Մուսալեռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«7» դեկտեմբերի 2018 թվականի N 54

## ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 72-Ն որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 72-Ն որոշման մեջ կատարել վերաբաշխում՝

   1) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում / պակասեցնել 810.0 հազար դրամ:

   2) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5112 /շենքերի և շինությունների շինարարություն / ավելացնել 810.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 7
գ. Մուսալեռ

ՄԱՐԶ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀՀ 04702116

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
էլ.փոստ musalerhamaynq@mail.ru
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«6» դեկտեմբերի 2018 թվականի N 53

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ Լ. ԴԱՎԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Լ. Դավթյան փողոցի թիվ 11 հասցեում գտնվող տնամերձ հողամասը /ծածկագիր՝ 04-069-061-007/ ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի պահանջներով, որոշում եմ.

1. Քաղաքացի Վոլոդյա Մարգարի Թամազյանին ընտանիքի նշված անդամներով՝ կինը՝ Թամազյան Ամալյա Հակոբի, աղջիկը՝ Թամազյան Անահիտ Վոլոդյայի, որդին՝ Թամազյան Ալիկ Վոլոդյայի, որդին՝ Թամազյան Գարիկ Վոլոդյայի, որդին՝ Թամազյան Մարգար Վալոդյայի, սեփականաշնորհված 04-069-061-007 ծածկագրով 0,075 հա մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին ավել օգտագործվող 0,015 հա հողամասը հատկացնել նրանց:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2018 թվական, դեկտեմբերի 6
գ. Մուսալեռ